ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԾՈՎԱԿԱԼ Հ. Ս. ԻՍԱԿՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 30-ին ՀՍՍՀ ԳԱ Նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված ՍՍՀՄ Նավատորմի ծովակալ, Սովետական Միության Հերոս, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ Հովհաննես Ստեփանի Իսակովի ծննդյան 90-ամյակին։ Գիտական նստաշրջանը հրավիրել էին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը, Հայաստանի գրողների միությունը, հանրապետության գլխավոր արխիվային վարչությունը։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Այսօր մենք հավաքվել ենք, ասաց նա, հարգանքի տուրք մատուցելու մեծ ծովակալ ու գիտնական Հովհաննես Իսակովի հիշատակին. նա սովետական նավատորմի ամենատաղանդավոր զորահրամանատարներից մեկն էր, ականավոր տեսաբան-գիտնական, գրող, հասարակական գործիչ, բյուրեղյա ազնվության ու մեծ հմայքի տեր մարդ։ Իր ապրած կյանքի ավելի քան 50 տարիները Իսակովը նվիրաբերեց սոցիալիստական հայրենիքի ռազմածովային նավատորմի զարգացմանն ու զորացմանը։ Նա իր բացառիկ տեղն ունի սովետական զորահրամանատարների այն համաստեղության մեջ, ովքեր ապահովեցին սովետական ժողովրդի հաղթանակը գերմանական ֆաշիզմի դեմ։

«Հ. Ս. Իսակովի ծառայությունները Սովետական Միության ռազմածովային նավատորմի զարգացման գործում» զեկուցումով հանդես եկավ ծովակալ, պրոֆեսոր, Սովետական Միության հերոս, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Վ. Ալեքսեևը։ Մեր փառապանծ հայրենիքի ականավոր զավակ Հովհաննես Իսակովը, ասաց նա, իր բուռն գործունեությամբ անջնջելի հետք թողեց սովետական զինված ուժերի, հատկապես ռազմածովային նավատորմի զարգացման ասպարեզում։

Նրա հերոսական մարտական ծառայությունը բազաքացիական կռիվների և Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հսկայական փորձը երկրի պաշտպանական հզորության ամրապնդման գործում, տեսական մեծ ժառանգությունը հայրենիքին ծառայելու հիանալի օրինակ են և արժանի բազմակողմանի ուսումնասիրության և մասսայականացման։

Իր դասախոսական աշխատանքի ընթացքում, շտաբային գործունեության ժամանակ, հրամանատարական բարձր պոստերում նա շատ ջանքեր է նվիրել նավատորմի մարտունակության բարձրացման, ռազմածովային միավորումների կառուցվածքի ամրապնդման, մարտական արդիական տեխնիկայով հագեցման, անձնակազմի բարոյաքաղաքական պատրաստության բարձրացման ուղղությամբ։ Ոտարերկրյա ինտերվենտներին կարմիր Պիտերի ջրային դարպասներից ետ շպրտելուց մինչև ռազմածովային նավատորմի շտաբի ղեկավարումը, միջմանից մինչև Սովետական Միության նավատորմի ծովակալի «կամրջակը» նա ամենօրյա հոգածություն էր դրսևորում սովետական ռազմածովային ուժերի շինարարության նկատմամբ, որին բերած նրա վաստակը հսկայական է։

«Իսակովը պատմաբան» զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Ա. Հարությունյանը նշեց, որ մեծանուն ծովակալը ոչ միայն ռազմական և ռազմածովային նավատորմի պատմության հմուտ գիտակն էր ու պատմագիրը, այլև համաշխարհային պատմագրության քաջատեղյակ հետազոտող, որի կարծիքը հեղինակություն էր վայելում մասնագետների շրջանում։ Ռուս և սովետական ռազմածովային ուժերի պատմությանը նվիրված նրա ուսումնասիրությունները, ռազմական օպերացիաների վերլուծությունները կապիտալ աշխատություններ են։ Իսակովն առաջինն էր, որ մոռացությունից փրկեց ռուս և հայ մի շարք ծովայինների հիշատակը։ Նրա ռազմապատմական աշխատություններն ու հոդվածները մերկացնում են պատմության արտասահմանյան կեղծարարներին։

Նստաշրջանի վերջում «Իսակովը գրող և հրապարակախոս» զեկուցումով հանդես եկավ արձակագիր Մ. Շաթիրյանը։

Հ. ՀՄԱՅԱԿՅԱՆ